


ԲԱՃՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոյ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ. 2 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 214

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆ

Պոլսոյ Մասիս չարախաղութիւն մէջ Մու-
չի անվեհեր առաջնորդը Բաբգէն վարդապետ
— Եր այժմ Պոլիս բանտարկուած է կերպով մը —
լրագրական բարեկրթութեան թելագրող խնդի-
րը կը յարուցանէ: Յօգուածագիրը այս պահուս
հայութեան ամենէն մաքուր, խրոխտ ու ազնու-
ական դէմքերէն մէկը ներկայացած ըլլալով,
իր քրքրած խնդրին կարեւորութիւնը ալ աւելի
կը շեշտուի: Խիզախ առաջնորդը իր անդողդոջ
մատովը ցոյց տալէն ետքը հայաստանի հայու-
թեան խորունկ վէրքերը, հիմակ ալ մատնանիշ
կրնէ այն բարոյական վէրքերէն մէկը որ մեր
հանրային կեանքը կը թունաւորէ, կը փտախ-
տաւորէ: — հրապարակական անբարեկրթու-
թիւնը:

Վարդապետը — թերեւ ալամայ անգիտակ-
ցութեամբ մը — իր յորդորը կողմէ պոլսահայ
մամուլին միայն, ուղեւոր միանալ արտասահման-
եան մամուլը որ ահա հերքելի կերպով լրագրական
անբարեկրթութեան բեռնը վաստակած է: Յօգ-
ուածագիրը երկու տողի մէջ կը խտացնէ իր թեզը.
«Ինչ որ ներքին չէ երկու անհատներու մէջ, նե-
րքելի է հրապարակի վրայ, շատ մը անհատնե-
րու մէջ»:

Այս, կարելի ըլլար վերջին հինգ տարուան
մէջ արտասահման հրատարակուած բոլոր թեր-
թերուն մէկ հաւաքածոն տանել թափել Բաբգէն
վարդապետին առջն, զայն աչքէ անցընելու դը-
ժնդակ հարկին մէջ դնել զինքը, և յետոյ խընդ-
րել որ կարծիքը յայտնէ մեր ազատ, անկապ լը-
րագրութեան բարոյական յատկութիւններուն
վրայ, քանի որ կը պահանջէ. «Ուղղութիւնը,

ուղղամտութիւնը, ճշգրտահաւթիւնը, աշխատու-
թիւնը, որոնք կը կազմեն հրապարակական
բարեկրթութեան հիմը, պէտք է ուժովցնեն,
սիրցունեն մեր բոլոր թերթերուն ու հանդէս-
ներուն սինակները: Որչափ կ'ըմբռնեմ՝ դրամ
շահելու, հացը հանելու անասնական աշխատու-
թիւն մը չէ՝ հրապարակագրութիւնը:»

Տարակոյս չի կայ, մանաւանդ արտասահմա-
նի մէջ, ուր պատառ մը հացի համար թերթե-
րը հախոյանք: Զրկութեան կը դառնան, զիրար
տապալելու, ոտնակոխ, անուանարկ ընելու ող-
բալի ու տգեղ գործիքներ կը հանդիսանան, առ
երևոյթ ազգային դատը, ժողովուրդին շահերը
պաշտպանելու սուտ ու կեղծաւոր կէտ նպատակի
մը հաշակումովը:

Այսօր, արտասահմանի հայութիւնը — ցա-
ւալի ճշմարտութիւն — տեսակ մը բնազդական
պժգանք ունի կարծես իր տրամագրութեան տակ
գրուած թերթերուն հանդէպ: Հինգամեայ ան-
դուլ անդագրում մարտնչում մը լրագրական,
ամենագնոյն պայմաններու մէջ տեղի ունեցած,
անխտահալութեան ու կասկածի նախապաշարումը
տեղաւորած է ընթերցողներու մտքին մէջ, Ոչ
մէկուն ըսածին կամ գրածին անկեղծութեանը
հաւատ կ'ընծայուի այլ ևս, եթէ նոյն իսկ ընդ-
հանուր խառնաղանձութեան մէջ, սուտերու սը-
լաքներու կոյր, մոլեգին ու քինալից տեղատա-
րափին մէջ, մերթ բարձրանան անկեղծութեան
ձայներ, ուղղամտութեան կոչեր, ինքնաճանա-
չութեան յորդորներ:

Արտասահմանի մամուլը ինք իր ուղղութեամբ
ինք իր ձեռքովը կոտորեց փլցուց ժողովուրդին
սրտին ու մտքին մէջ կանգնուած հաւատքին ամ-
րակուռ շէնքը, — երկիւղած, անալլայլ հաւատ-
քը լրագրութեան վրայ, մամուլի աշխատուորնե-
րուն վրայ:

Արտասահմանի հայր ալլեա չի յարգեր իր մտքին բարոյական սնունդ մատակարարող, իր հոգիին քաջալեր, վստահութիւն, կորով ներշնչող գրչի աշխատաւորները: Հիմակ, թերթերու ընթերցումը անկարելի, նոյն իսկ անհաճոյ ժամանցի մը կարգը անցած է:

Բարբէն վարդապետի յօդուածը ամենէն աւելի կը պատշաճի արտասահմանի մամուլին. բոլոր թերթերը արտադրելու են զայն, ու միաբանօրէն, միահալոյն կերպով ընդունելու են կացութիւնը և զայն հիմնովեր փոխելու միջոցները ձեռք առնելու են:

Ապա թէ ոչ հայ մամուլին բարոյական ազդեցութեան հիմնական փճայման հետ, կամաց կամաց, հասարակութեան բարոյականն ալ ցաւալի անկումներու պիտի ենթարկուի:

ԱՐՏ

ԱԶԴ

Քաղաքիս Ազգային Երկ. վարժարաններու ամսվերջի հարցաքննութիւնները պիտի սկսին Յունիս 6ին և պիտի տեսն մինչև Յունիս 22:

Քննութիւնները կըսկսին առտուան ժամը 9ին և կը տեսն մինչև 11 ու կէս, իսկ ցորեկէն ետքը 2 ու կէս-4 ու կէս:

Կը խնդրուի յարգոյ հասարակութենէ որ բարեհաճի ներկայ գտնուիլ երկուսու ուսանող մանկտին խրատութեամբ համար:

Ուսուցչական խումբին կողմէն

1901 Յունիս 1.

Վառնա

Ատենադպիր

Ատենապետ

Մ. ՅԱՎՀԱՆՆԷՍԵԱՆ Ս. ԱՊԱՅԱՆԵԱՆ

—Թուրքիոյ գաւառական Ազգ. վարժարաններու վիճակացոյցը պատրաստուած է որ ցոյց կուտայ թէ՛ 33 վիճակներու քաղաքներու և գիւղերու մէջ կը գտնուին 478 վարժարան, 38,274 աշակերտ, 15,650 աշակերտուհի, 1,005 ուսուցիչ և 398 ուսուցչուհի. տարեկան ծախքին գումարն է 236,642 չրշ. Այդ վիճակացոյցը երկրորդ հատոր մըն ալ պիտի ունենայ, որուն մէջ պիտի ներկայացուին քննարկելու 27 վիճակներու վարժարանները:

—Պուլկարիոյ մէջ հայ վարժարաններու թիւն է 15, աշակերտաց թիւը 1327 և տարեկան ծախքը՝ 54,151 ֆրանք:

Բոժ.—Արդիւնքը...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ



Սօֆիա 28 Մայիս 1901

... Խմբագիր

Վերջերս «Իրաւունք»-ի մէջ կարդացինք տեղւոյ թաղ. խորհրդոյ պաշտօնական մէկ նամակը հանդերձ թատրոնի հաշուեցուցակով, ուրկէ կը տեսնուի թէ 350 ֆրանքէ աւելի հատուց մը եղած է. բայց ո՛ր են այդ գրամները, տակաւին և ո՛չ մէկ պաշտօնէի ամսականը տրուած չէ: Անցեալ օր խեղճ քահանան առ հաշիւ քանի մը ֆրանք ուղած ըլլալուն համար շատ կծու պատասխան մը ստացած էր ու խեղճը գրամական անձկութեան պատճառաւ տակաւին այդ մութ ու խոնաւ եռանկիւնէն չէ կրցած գուրս ելլել, որով ամեն օր գրեթէ, յօդացաւէ կը տառապի. նոյնպէս միւս պաշտօնեաները միեւնոյն կացութեան մէջ են:

Շիտակը շատ տարօրինակ կը թուի մեզ Արժ. Թաղ. խորհրդոյ բռնած ընթացքը, իրենք էին, որ միշտ կը դատաւիտէին ու կը քննադատէին իրենց նախորդները ու անոնց ընթացքը, ահաւասիկ ազգը անոնց ձեռքէն գործը առնելով իրենց յանձնեց, ո՛ր է ուրիշմ իրենց ձեռնահասութիւնը, ալլը իրենցմէ չի պահանջեց որ գործի վրայ եղող պաշտօնէից ամսականները դիզուին ու իրենց մի քանի բարեկամաց՝ ազգէն ունեցած հին հաշիւները կարգադրեն. պէտք է նախ պաշտօնէից ամսականները կանոնաւորապէս վճարեն ու եթէ դրամ աւելնայ, այն ատեն պարտքի յատկոյնեն. վասն զի, պէտք է գիտնալ որ պաշտօնական գործոց մէջ ինչպէս որ անձնական կիրք երբեք չպէտք է մըտնէ. նոյնպէս ալ բարեկամական շնորհ չպէտք է ըլլայ: Ահաւասիկ 350 ֆրանքէ աւելի գումար մը կալ մէջտեղ բայց Արժ. Թաղ. խորհուրդը ի շնորհս բարեկամութեան չի հետապնդեր հաշիւները յանձնել չուող պարտները: Պատ. խորհուրդը պէտք է գիտնայ որ ինքը կառավարութեան կողմէ չշահակուած մարմին մ'է, հետեւաբար պատասխանատու է կառավարութեան առջեւ: Ուստի ինքը եթէ չուզէ պիտք եղած միջոցներով այդ մարդոցմէ գրամները գանձել ու պաշտօնէից դիզուած ամսականները տալ, ժողովուրդը խնդիրը կառավարութեան պիտի մայնէ ու քննութիւն պիտի պահանջէ: Այս առթիւ Գեր. Այց. Հովիւին ու իր կողմէ իբր խորհրդական նշանակուած անձին ուշադրութիւնը կը հրաւիրենք:

Վ. Մ.

Սերպետր մեմալիֆե փառնիյանէ պիր հիւնիւ

Այլէն բաշար իրթէսի կիւնիւ սաթ 12 րատէ-
լէրինտէ պիր իշ իշիւն Ուրիցա 2ար Պօրիստէ Տ. Յ.
Էնկիպարճան նամ զաթրն տիւքեաննտա պուլունտու-
դուսուզ վազըթ՝ շիմտիյէ գատար աւլա թանրմատըղը-
մըզ, կէօրիւշմէտիլիմիզ վէ լէճինտէ հախօտ ալէճինտէ
պուլունտուղըմըզ Գալապըր Կարապետ նամընտա պիր
շախտ՝ պիրի Տէլաթ լիմէթ գատարյա իւզէրիմիզէ Տիւ-
ճիւմ իթմիշ սլուպ, մէրզուսուն բէնէսինտէն Տ. Ար-
շակ Բաշեան վէ Տ. Յակոբ Տաճի Կարապետեան նամ
զաթըր կիւճ Տալ իլէ գուրթարապիլիմիշլէր տիր:

Շախտր մէրզուսուն Տէման րօրիս նէգարէթինէ իճա-
լէ խաւպ՝ տէյճինէ իգամէի սաթա իթմիշլիզ տիր:
Թափօրիլմը իլէրուտէ:

ԱՆԻՍՏԱՆԻ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ)

Բաժնաթրա

Ի նպաստ Ազգ. վարժարանաց ներկայացում տըր-
ուած իրիկունը՝ Թազ. խորհուրդը՝ վարժապետներու
առնելիքի փոխարէն իւրաքանչիւրին ալէլ Տիսապ Յական
Փրանքնոց մէյմէկ թատրոնի տոմսակ բէնց: Խոռոնազ
բարտուղարը, այսօրինակ պաշտան եմնէ քեղիւնաքիմը
չենթարուելու: Համարօր մը առաջէն սուտիկէ հարբուխ
եղած էր:

Ուրիցա Բօթբօթ

Վարժուհիին վրայ ձեծի վազոյ տնօրէնը՝ նոյնը
ընել փորձեց տնտեսուհիին ալ որ առնելիքը պահան-
ջելու քրէական յանձանքը գործած էր:

Պալքան

Պուրկարահայ վարժարանաց տարեկան հարցա-
քննութիւնը ներկայ ամսուն մէջ պիտի սկսին: Այս
առթիւ, ըստ ընկալեալ սովորութեան՝ կարգ մը դասա-
տուներ մեծ իրարանցումի մէջ են կարգի դնելու հա-
մար... նախապատրաստեալ հարցարաններ, որոնց
յաջողութիւն և օձիւրնին ձեռք չտալ կը մայթէ պարոն
Բոժոժիկ:

Թատրոն Պօրիս

Մեր պարերգակ պարոնը՝ հակառակ ամեն կողմէ
յայտնուած բուռն բազմակիս՝ փախցունք կընէ, իր քիչ-
ժին համեմատ կը շարժի, ուզած ատենը տեսարան
կուգայ չուզած ատենը չիգար: Երբեմն բրօքրամին մէկ
բանի մասերն ալ չեն ներկայացուիր, խաւիւն կըլլան կոր:

ԺԱՄԱՆՑ

ԱՆԻՍՏԱՆԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ...

Եթէ այս պատգամը՝ նոյն ինքն Արամազդ
աստուածն արձակէ Ողիմպոսի Եօթնադագաթ
կատարներէն, առոր ամենեւին հաւտաք չընծա-
յելու կատարեալ իրաւունքը կը վայելէք: Անթե-
րի գեղեցկութիւն չկայ, ինչպէս որ չկայ վարդ
մը անփուշ — աւանդական ծիծառ բացատրու-
թեամբ — և ինչպէս որ չկայ պղատոնական, իտէսլ
ու գերազանցօրէն գերբնական սէր մը սրուն
ծայրը՝ ամենապաղ իրականութեան... չյանգի:

Բայց, ամէն պարագայի տակ, ներելի է
բանաստեղծին հետ կնոջական անթերի գեղեց-
կութիւն մը երեակայել և զինել տառնաբանեայ
մը, որ այս անգամ փոխանակ Սինայի լեռնէն
իշնելու, ուղղալի Պառնասէն կ'ընայ:

Անթերի կերպով աղուոր ըլլալու համար — ա-
կան շնիգ բացէք, հետաքրքիր բնութեցուհիներ
ըստ — կին մը պէտք է ունենայ ըստ բանաստեղծին:

1. ԵՐԵՒ ԲԱՆ ԶԵՐՄԱԿ. — Մարմինը, ակու-
ններն և ձեռքները:

2. ԵՐԵՒ ԲԱՆ ՍԵՒ. — Վիշերը, յօններն և
արտաւանդները:

3. ԵՐԵՒ ԲԱՆ ԿԱՐՄԻՐ. — Շրթունքը, աչքերն
և եղունգները:

4. ԵՐԵՒ ԲԱՆ ԵՐԱՐ. — Հասակը, մազերն և
ձեռքները:

5. ԵՐԵՒ ԲԱՆ ԿԱՐՃ. — Ակունները, ակունջ-
ներն և ռսֆերը:

6. ԵՐԵՒ ԲԱՆ ԼԱՅՆ. — Իրանը, ճակատն և
յօններուն մէջքերը:

7. ԵՐԵՒ ԲԱՆ ՆԵՂ. — Բերանը, մէջքն և
ռստրներուն պարանոցը:

8. ԵՐԵՒ ԲԱՆ ՆՈՒՐԱ. — Մազերը, մասներն
և շրթունքը:

Այլապէս հինգ մասերը պտըտեցէք և
երբ գտնաք կին մը որ այս 8X3 յատկութիւն-
ներով օժտուած է, ամուսնացէք հետը, և ամիս
մը ետքը — հակառակ բանաստեղծին ըսածներուն
— պիտի տեսնաք թէ ձեր անթերի կարծած կինը
որ իրօք աստուածուհիի մը աղւորութիւնն և
յաւերժահարսի մը շնորհալիութիւնը կը կրէ իր
վրայ, ունի նաև անանկ թերութիւն մը որ ոչ
քու մտքէդ կ'անցնէր, ոչ բանաստեղծին, ոչ ալ
այս տողերը գրողին:

Այլէն, ամէն պարագայի մէջ, անթերի
գեղեցկութեամբ կին մը ունենալը վտանգաւոր
բան է: Գիշեր ատեն անտառի մը մէջէն պարկ
մը ոսկի շալկած երթալու կը նմանի:

Կ. Պօրիս

Ե. Թ.

ԶԱՆԱԶԱՆՔ

Թէ ո՞րչափ կ'արժէ աղոյժ աղջկան մը Ռոնգունիք. — Սէնի քաղաքային գատարանը անցեալ օր վճռեց այս շատ փափուկ կէտը: 280 լիւրա կ'արժէ եղեր: Դեռատի օրիորդ մը, նշանաւոր թէ՛ իր գրական ձիրքերով և թէ՛ գեղեցկութեամբը, դատ բացաւ կառքերու ընկերութեան մը դէմ, որուն մէկ գեղեցիկ կառքին մէջ նստած թատրոնէն իր տունը կ'երթար: Ճամբան, Շան Վէլէզէի ընդարձակ ծառուղիներէն մէկուն վրայ, ձիերէն մին խրտչեցաւ մօտակայ շոգեշարժ մեքենայի մը սոսկալի աղմուկէն: Կառապանն իր նստած տեղէն վար ինկաւ, և օրիորդն ալ, վարանումի մը մատնուած, որոշեց դուրս ցատկել, ինչ որ ալ ըլլայ: Բայց շատ գէշ ինկաւ, և ռնգունքը ճգմուեցաւ: Օրիորդը դատ բացաւ ընկերութեան դէմ, և 600 լիւրա հատուցում պահանջեց իր սիրուն դէմքին եղած վնասին համար: Ընկերութեան փաստափանն ի դուր առարկեց թէ օրիորդը շատ մեծ անխոհմութիւն գործեց կառքին վար ցատկելով, երբ ձին կը վազէր: Դատարանը մերժեց այդպիսի փաստերը, և հրամայեց որ 7000 ֆր. (280 լիւրա) վնասուց հատուցում ըլլայ օրիորդին:

Եօթն անգամ ալի. — Քանդոն նահանգէն գեղանի Ձինուհի մը տասն տարուան մէջ եօթն ամուսնութիւն կ'ընէ: 17 տարեկան հասակին կարգուեցաւ Ձինացի գրագէտի մը հետ, որ վեց ամիսէն մեռաւ: Քիչ ժամանակ վերջ կ'ինը, որ երթալով կը գեղեցկանար, կարգուեցաւ չինացի սպայի մը հետ, որ օր մը ձիէն իյնալով մեռաւ: Տարի մը վերջ այրին կօշկակար մը առաւ: Նոյն արհեստէն ուրիշ մը, Դիգ Մա անուն, սիրահարելով կ'նոջ, կարկանդակին մէջ թոյն դրաւ և կերցուց արհեստակցին որ մեռաւ: Կինը Դիգ Ման առաւ: Հանգուցեալ կօշկակարին եղբայրը, դատաբանութեան գաղտնիքն իմանալով, Դիգ Մա-յի դէմ դատ բացաւ: Դիգ Մա բանտին մէջ ինքըզինքը կախեց: Մէկ տարի անցաւ այս գէպքին վրայ, և կինը կարգուեցաւ խաղամուրի մը հետ, որ ունեցածները կորսնցնելով ինքզինքը դետը նետեց: Յետոյ կարգուեցաւ գերասանի մը հետ, որ իր արհեստէն զգուելով զինուոր եղաւ, և անցեալ տարի Վայնովի ապստամբներուն զրկուելով մեռաւ: Այրին, անսպառ կորովով, այս ան-

գամ որոնադիր մ'ընտրեց իրեն էրիկ, որ օր մը լաստակին վրայ ոտքը սահելով վար ինկաւ քսան ոտք բարձրութիւնէ մը և մեռաւ: Տիկինն հիմա 27 տարեկան է, կեանքի և աշխոյժի ամենէն առոյգ եղանակին մէջ:

Ժամուցով եկեղեցի երթալ. — Դերերը փոխուած են, Ժողովուրդը չէ որ ժամուց պիտի տայ եկեղեցականներուն, այլ այս վերջինները պիտի տան Ժողովուրդին որպէս զի աղօթելու երթալ: Ամերիկայի մէջ մէթոտական եկեղեցւոյ մը Հովիւն անցեալ շաբթու օրաթերթերուն մէջ ծանուցում ըրաւ թէ ո՞վ որ կիրակի առաւօտները պաշտամունքի ներկայ գտնուի՝ դրամական որոշ գումար մը պիտի ընդունի: Առաջին կիրակին այնչափ մարդ ժամ գնաց որ ասեղ ձգելու տեղ չմնաց: Եկեղեցիէն դուրս ելնելուն՝ ամեն մարդ ծանց(50 փարա) կ'ընդունէր: Այս յաջողութենէն քաջաւերուած, Հովիւը կ'կրկնէ ծանուցումը: Միւս եկեղեցիներուն պատուելիները, տեսնելով որ իրենց հօտը վճարող եկեղեցին կ'երթայ, հիմա միջոց կը խորհին հաւատացելոց այս տեսակ մը ժամուցագիրն աւելցնելու:

Ամերիկեան Ամուսնութիւն մը. — Հարուստ կալուածատէր մը Պ. Բիկան, Քաւասաի մարգագետիններու մէջ քառասունակ արշաւելով դժեգակ օր մը անցնելէ յետոյ՝ փիլիսոփայաբար սիկարէթ մը սկսաւ ծխել, ծխալմաճառէ մը գլխուած տուփ մը հանելով գրպանէն: Պարապ առփը նետելու ատեն մէջը հիւսնալի լուսանկար մը գտաւ: Անունը Միսս-Էլլա Ս... էր, կը ֆնար գտնալ կենդանագրին անձը: Հետաքրքրութենէ մղուած Պ. Բիկան այդ հասցէին հետքին հետեւեցաւ և կարողացաւ Օր. Ս... ն գտնել որ թ... ի մէջ ծխալմաճառուհի էր: Նմանութիւնը կատարեալ էր, լուսանկարը չափազանցուած չէր: Ինչ կ'ընէ մեր Պ. Բիկանը պարզապէս, կամուսնանայ օր Ս... ի հետ: Այդ անծանօթ օրիորդը հեռաւոր գիւղի մը մէջ կ'զղիացած, ուրիշ միջոց ունեցած չէր, այլ միայն լուսանկարը և հասցէն սահեցնելով մէկ քանի տուփերու մէջ գործը բաղդին յանձնած էր, փոստի թէ նա չպիտի ուշանար իրեն աղւորիկ ամուսին մը ճարելու: Մեր Պ. Բազդն ալ, ինչպէս որ կը տեսնենք, չուշանար օրիորդին դուռը զարնելու:

Ծ Ի Ծ Ա Ղ

ԴԻՏԵՑԷՔ... ՄԻՇՏ ԿԸՆԱՅԻՆ

— Դերձակը՝ հագուստիդ.
 — Կոշկակարը՝ կոշիկներուդ.
 — Մայրը՝ զաւկին ձեռքը.
 — Վարժապետը՝ օրացոյցին.
 — Խանութպանը՝ դրամագլխին.
 — Վաշխառուն՝ ամբողջ ունեցածիդ.
 — Փեսան՝ առնելիք դրամօժտին.
 — Հոգեւորք մը՝ միշտ անկիւնը.
 — Դուլ ամուսինը՝ կնկանը խօսքին.
 — Խօսք չգիտցող հիւր մը՝ ժամացոյցին.
 — Ղեկավարը՝ նաւապետին.
 — Սիրահար աղջիկ մը՝ լուսինին.
 — Ցատկեմձի միւսիւնները՝ անուան սուարէի.
 — Վրաձգոցը՝ մէկ բերան հրաւէրի.
 — Երախան՝ մօրը կուրծքին.
 — Որկրամուրը՝ ճաշարանի ցոյցափեղկին.
 — Բժիշկը՝ դրան զարնուելուն.
 — Խաղամուրը՝ բախդին.
 — Ծոյլ դպրոցականը՝ տօն օրերու.
 — Գրագիր մը՝ չօրպաճիին աչքը.
 — Մուխուֆձի կնիկները՝ պատուհաններէն
 դուրս.

Վ. Փ.

Հանրակառքի կայարանին մէջ.
 Պարոն մը գլուխը երկնցունելով մեկնելու
 պատրաստ հանրակառքի մը գունէն ներս, կը
 հարցնէ հեգնական ձայնով մը.
 — Նոյեան տապանը լեցուն է.
 — Ոչ, կը պատասխանէ չարածձի մը ներ-
 սէն, ճիշդ սագ մը կը պակսի... մտէք.

— Մկրտիչ, խառապին գնա՛ նայէ քի աղ-
 ւոր կովի ոտք (բաշա) ունի.
 — Շատ լաւ. մայրիկ ըսելով տղան կը վազէ
 ու հինգ վայրկեանէն կը վերադառնայ.
 — Մայրիկ, խառապին կովի ոտք ունենալը չի
 տեսայ, չիւնքիւ բօթինը հագած էր.

Միականի հանած վարած մը կը մօտենայ
 թատրոնի կիշէին.

— Մուտքը քանի՞ է.
 — Մէկ ֆրանք.

— Ուրեմն ես կէս ֆրանք պիտի վճարեմ.
 — Ինչո՞ւ.
 — Որովհետեւ ամէն մարդ երկու աչք ունի,
 մինչդեռ ես մէկ աչք ունիմ:

Ն Մ Ո Յ Յ Մ Ը

ՏԵՂԱԿԱՆ, ՀԻՆ ԲԱՄԲԵՐՈՒ

(Շար. եւ վերջ 212 թիւէն)

— Նէ՞ հապէր պէ էրթին ուսթա.
 — Հայըրլար.
 — Էրթին ուսթայա պիր դաավէ բիշիր
 պէնտէն.
 — Պէն վաթէն սըմարլատըմ.
 — Աղարլայաճաամ սէնի կալիպա եա պէ.
 — Բէք իյի, էօյլէ օլտուն.
 — Օ տէյիլ ամա, տիւյիւնիւ տահա եա՞քմա-
 յաճագմընըզ.
 — Նէ՞ տիւյիւնիւ պէ, տիւյիւն մի տիր օն-
 լար.
 — Նէ՞ վար քի.
 — Օնլար շիմտի պօշ շէյլէր պէ. պիզ պիր
 վագըթաա տիւյիւնիւմիւզտէն պիր հաթթա սօլ-
 րա կիւճ իլէ կէլինին եիւզիւնիւ կէօրէ պիլիր ի-
 սիք, շիմտի իսէ, ալլահա շիւքիւր հէր կիւն է-
 վինտէ.
 — Էօյլէ պէ գարտաշ, էվինտէն տըշարը չըգ-
 մայօրլար. գարտըրաճագլար տէիի գօրգայօրլար.
 — Հէմ պիլիրմիսին, պիզիմ վագթըմըզտա
 թէրպիյէ, նէզաքէթ վար ըտը պէ գարտաշ.
 — Հէլպէթ էօյլէ օլտաճագ. հաթըրլայօրմընըն,
 կէլինլէրիմիզ սէնէլէր պէքլէր, տիլ թուլթարլար,
 գօնուշմազլար տը.
 — Եա պիլիմքի. պապամտան թամամ սէքիզ
 սէնէ տիլ թուլթաու.
 — Պէ՞ ճանըմ, օ վագըթ պէրէքէթ վար ը-
 տը, պէրէքէթ.
 — Ագլընըլտա՞ մը պէ, թըթմաճ կէլինինին
 պազ եօլունտա նշանընընա եալտըզը.
 — Եա՛, եա՛, հայ Ալլահ պէլանը վէրմէյէյի-
 տի, հա՛, հա՛, հա՛.
 — Գատօղ արապասը կիտէրքէն նըշանընը-
 նըն ֆէսինի գավրատը.
 — Սահի՞հ մի պէ.
 — Պա՛ա պօղումունտ կիտէյօրտուգ կալիպա
 եա՛. պունլար ինաու կիթտիլէր, օ տա եաբարըմ
 տէտի, ֆէսի գավրատըզը կիպի գատօղուն իշին-
 տէ գայպ օլտու:

—Ամմա ճէսարէթի գըզ իմիշ եւ :

—Սէն օնու տէյօրսուն պէ, շէյ ագլընտա տէյիլ մի. Շուսնուլու պուպուգ դարսը :

—Վալլահի պէն օնուն պէշիլինի պիլմէյօրուն :

—Ամմատա ետբտըն հա, պիլմէ՞ղմիսին պէ, բաւտըրմայըք մանտանըն իւթիւնէ բինիպ ինատ իշիւն նշանլըսընըն էվինէ կիթմիշ իտի :

—Սահիհ, սահիհ պէ, շիմտի ագլըմա կէլ-տի, էհ նէ՞ օլաճագ, օ զաման տա թէրպիլէսիզ վար տը ամա, նէ գատար օլաա շինտի բէք վիյա-տէ տիւր :

—է, շէյ ագլընտա տէյիլ մի պէ Ավանէս :

—Քիմ պէ :

—Շէյ Զըթ-բըթ գըզը, տիւյլւնտէ իքէն օթուրտուլու օտանըն հալըսը թու թուշմուշ տա քիմսէյէ հապէր վէրմէմիշ իտի, պու սէպէպտէն թէքմիլ էվ եանմըշ տը :

—Նէյէ հապէր վէրմէյօր եա պէ :

—Վէրմէյէճէք զահէր, քիմսէյիլէ գօնուշ-մայաճագ, տիլ թու թաճագ տը :

—Իթաաթ ըմըշ օնլար պէ ճանըմ, իթաաթ, շիմտի պաճաղըմ գատար պիւր լօգմա շէյլէր սա-նա պանա գարշը լագըրտը Եօյլէյօրլար :

—Էրթին պէ, սիզին հալլայը սաթաճագ-տըն, սաթտըն մը պարի :

—Ագլըմը մը եէտիմ պէ, հիշ օ գատար եէր եեթի ալթընա վէրիլիմ մի, էօլսէմ վէր-մէմ :

—Վէրմէ տէ սաղլա թուրշուսունու գուր :

—Սէնին էօյլէ եէրտէ պաճա սաթտըն վա՞ր մը, պէրէքեթ վէրսին պապստան գալմըշ, պի-զէ գալսա՞ պէշ արշըն եէր ալմազըք, կէշէն կիւն քիւրէմիթլիյի էլլէր իքէն տիզ շէօքիւպ անամ պապամ իշին տուվա էթտիմ քի ազ չօգ պրագ-մըշլար :

—Էյի սէօյլէյօրսուն ամա, սէնէլէր ֆէնա պէ Դօգօշ, պէրէքէթ տէտիլին շէյ պիւթիւն պիւթիւնէ գալգմիշ, եալանճըրգլա տօլանտըրը-ճըլըգ չօղալմըշ, առամ պապաորնա էմնիլէթ իտէմէյէճէք էտէմէյօր պէ գարտաշ :

—Հագկըն վար, էկէր ալլահ պապա պու սէնէ տէ պիւր պէրէքէթ վէրմէզուէ բալայը բըր-թըլը թօփլայըպ ուզալանմալը :

—Նէրէյէ կիթմէլի եա՞ պէ :

—Քէօյլէրէ, քէօյլէրէ, պիլի օրասը բագ-լար :

—Քէօյլէրէ՞ մի, շինտի օնլար պիլտէն-ագըլլը պէ, քէօվտէ եըմըթմայը տէօրթ բարայա վէրմէյօր տա՞ ալթը եէտի սաաթլըք եօլ եէօրիւ-յիպ կէթիւրիպ պէշ բարայա սաթլըյօր : Հիշ օն-լարըն իշինտէ կէօղ աշլըլը մը պէ, ույանմըշ-լար, ույանմըշլար, ալթըք պիլէ էքմէք դալ-մատը :

—Էքմէք տէտին տէ՞ գարնըմ աճըգտը սաաթ գա՞շ եա պէ :

—Էօյլէն տիւր, եէմէք վագթը տըր :

—Էօյլէ իսէ եէմէյէ կիթմէլի, ըսեւլ ամեն-քըն ալ կը ցրուուին ու ճաշէն վերլը դարձեալ սրճարան հաւաքուելով, միևնոյն խօսակցութեամբ օրերնին իրիկուն կընեն եղբր :

ԷՄԷ ԺՈՒՊԷՌ

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Այս գիշեր. — «Երկու սիրահարները» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար. «Ոճրա-գործին պատիժը» բանթօմիմ 5 արար :

Վաղը գիշեր. — «Կեղծ Կտակը» կատակա-խաղ 3 արար. «Անմեղ Աղջիկը» բանթօմիմ 5 արար :

Պարերգք, Պ. Գ. Յակոբեանի, Օր. Մարիի և Օր. Զօիցաի կողմէ :

Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆի» 12երորդ տետրակն ալ : 20 տետրին բաժնեգիրն է Պուկարիոյ համար 2 ֆր. արտասահմանշու կէս ֆր. կանխիկ :

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հե-ղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ. Ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աղեքսանդրիոյ «Արաքս» նուահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 21 ֆրանք Պուկարիոյ և Ռուսմանիոյ մէջ ստա-նալ փափագողք գիմելու եւ մեր խմբագրու-թեան :

Թ. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԵԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուկարեանի լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (21)

ԹԻՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒԿԵ)



Իշխանը նշան ըրաւ հէք կնոջ որ լսէ և յարեց:

—Նոյն իսկ միտք չէք ըրեր ձեր առջեւ բերել առաւ և հարցաքննել Մէ-Քուի աղախինը: Թերեւս կրնար թանկագին տեղեկութիւններ տալ տունին շուրջն յաճող մարդոց մասին:

—Իրաւ է, թոթովեց մանտարէնը, հետզհետէ ինքզինքէն ելլալով, միտք չըրի: Ամբաստանեալներուն խոստովանութիւնը, անոնցմէ մէկուն հովհարին գըտնուելը զոհին գիակին տակէն, շահը զոր միայն Ի-թէ-Քունէր Լէնկի մահաւնէն, այս ամենը բաւական ապացոյցներ երեւցան ինծի:

—Ես մտածեցի որ այդ աղջիկն հարցաքննելու է և մարդ գրկեցի բերել տալու համար:

Եւ փոխարքան հրաման մը տուաւ իր մէկ թիկնապահին: Սա դուրս ելաւ հրամանը գործադրելու, բայց գրեթէ անմիջապէս ետ դարձաւ իր պաշտօնակիցներէ մէկուն հետ որուն զէմքն այլայլած էր:

—Ի՞նչ ունիք, հարցուց իշխանը: Ինչո՞ւ չէք բերեր աղախինը:

—Վասն զի չգտայ զայն, Տէր:

—Չգտա՞ք:

—Ոչ, երբ ֆուն-Սի հասաւ այս տառու, գեւաջուցած, շորս ոստիկաններու հետ, ի դուր զարկի ցուցուած դուռը: Եւն տան բանալ տուի, տունը պտտելու համար: Ոչ ոք կար: Արեւն վար խուզարկել տուի, պարապ էր: Սենեակները կողոպտուած էին, կահերը խորտակուած: Այս գողութիւնը քանի մը ժամ առաջ ուսն գործ ըլլալու էր, վասն զի ճաշասենեակին մէջ լուսար մը կը վառէր տակաւին:

—Գէթ դրացիներն հարցափորձեցի՞ք:

—Այո: Բան մը ոչ լսեր ոչ տեսեր են:

Երեք նահանգներուն պետը, յայտնապէս զայրացած, ոտքի ելած էր և մեծաբայլ կը ճիւղէր սրահին մէջ:

Մէնկ չէր համարձակեր խօսք աւնուլ տիկին Ղիու որ այս նոր գեղատեսիլութենէն կընկճուէր, ինքն ալ քուլութիւն կը պահէր:

—Կը տեսնէ՞ք, պարոն նախագահ, ըսաւ յանկործ փոխարքան կենալով դատաւորին առջեւ, ահա երկրորդ ոճիր մը որ ապահովապէս ձեր դատաւճիռին հետեւանքն է: Ասիկա կը բաւէ զիս համոզելու համար ձեր դատապարտած անձերուն տեղեկութեանը վրայ, վասն զի յայտնի կետեալ թէ Լէնկի ճշմարիտ սպանիչներն են որ, արդիւնք համար այդ աղախինը խօսելէ, անհետացուցեր են զայն: Արնայ ըլլալ որ այդ աղջիկն ալ իրենց մեղսակիցն ըլլալ: Ամեն պարագայի մէջ դուք ամենամանր կերպով թերացեր էք ձեր պարտականութիւններուն մէջ: Աւասիկ որոշուած, այդ դատին պաշտօնագրութիւնը Բերին պիտի զրկուի իմ յարմար դատած ծոնթագրութիւններս կցելով անոր: Երեսուն օրէն առաջ ձեռքս չի հասնիր: Ուրիմն մէկ ամիս ունիք առջեւնիդ: Եթէ, մէկ ամսուան մէջ, երեսուն հանգիք ճշմարիտ յանցաւորները, անմեղները անպարտ պիտի արձակուին և դուք դարձանա՞ծ պիտի ըլլաք ձեր սխալը: Բայց եթէ, այս պայմանաժամին լրանալէն յետոյ, իրերն իրենց նախկին վիճակին մէջն են, և եթէ մեր Վեհափառ տէրը հրաման զրկէ ինծի որ արդարութիւնն ի գործ դնեմ, Տէր: Լէնկ և Ի-թէ պիտի պատժուին, վասն զի ամենէն առաջ ես օրինակ տալու եմ օրէնքն յարգելու մէջ: Բայց դուք, գատաւոր, պաժպուի հարիւր հարուած պիտի ընդունիք:

—Պաժպուի հարիւր հարուած, ըսաւ Մէնկ թոթովելով, պաժպուի հարիւր հարուած:

Կը յուսար որ սխալ լսած կըլլար,

—Պաժպուի հարիւր հարուած, կրկնեց Ն. Բարձրութիւնը:

—Մահ է:

—Գուցէ: Անմեղներն ալ պիտի մեռնին: Գացէք և թող Լա-Յու օգնութեան հասնի ձեզ:

Եւ ալ առանց ուշադրութիւն ընելու եղեւնադատ տանի խոշոր նախագահին, քանի իշխանը դուրս ելաւ անմիջապէս:

Մէնկ սարսափահար եղած էր: Սրունքները չուղիւղ վիճքով տանիլ, խեղճը աթոռի մը վրայ ինկաւ:

Երբ յաջողեցաւ բաշկոտուելով մինչև իր գահաւորակն հասնել, ծառաները ստիպուեցան մէջը նստեցնել փնթը:

—Պաժպուի հարիւր հարուած, կը կրկնէր անպարտ խեղճ մարդը ծառան, ինծի, Մէնկ, երրորդ կարգի մանտարէն:

Երբ հասաւ այն քարափն ուր իր նաւազները կը սպասէին Հօնան տանելու զինք, զէմքն իրաւ այլայլած էր: Իր երկու գահաւորակիւններուն օժանդակութիւն

ստիպուեցաւ պահանջել իր մակոյկն երթալու համար:

— Ի՞նչ ունիք, սիրելի դատաւարս, հարցուց յանկարծ Եւրոպացի մը երբ անկէա ոտքը մակոյկին մէջ պիտի գնէր: Ի՞նչու աւրուեր էք: Գծբախտութիւն մը պատահեցաւ ձեզի:

Մէնկ ետին դարձաւ:

Բերքինս իր առջեւն էր:

— Ի՞նչ ունիմ, պատասխանեց տարաբախտ դատաւորը ճանշնալով Պոքթա-թիկրիսի իր հին բարեկամը, ի՞նչ ունիմ: Անպատուեցայ, կորսուեցայ, մեռայ: Պաժպուի հարիւր հարուած, պաժպուի հարիւր հարուած:

Եւ ծանրապէս մակոյկ նստաւ առանց աւելի խօսք մը ընել կարենալու:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՃԵՐՄԱԿ ՆՈՒՆՈՒՖԱՐԸ

Ա.

Կախում մարդու մը գիմը

Գրեթէ ութն սրեր անցեր էին այն դէպքերէն ի վեր որք առաջին մասը կը կաշմեն այս պատմութեան, երբ երկու մարդեր, որք յոյժ կը շահագրգռեն մեզի, կէս գիշերին անցան Հօնանը ցամաքին կապող կամուրջէն: Քանդոնի այդ այլանդակ արուարձանին առաջին տուններն հասնելով զորս արդէն առիթ ունեցանք նկարագրելու, աջակողմ դարձան, հարիւր բայի չափ գետեզրին հետեւեցան, և կանգ առին խրիլիկ հիւղակի մը առջեւ որուն պատը կողողուէր անշուշտ ալիքներէն երբ գետին ջուրերը բարձրանային:

Այս երկու մարդեր երկրին տարազը կը հագնէին, ու թէև խաւարն ստիպէր զանոնք գրեթէ խարխառնօր բալելու, անոնք իրենց երեսին վրայ իջեցուցած էին իրենց թաղեայ գլխարկներուն լայն եզերները:

Վախ չունէին սակայն ու է մէկէն ճանչցուելու, վասն զի բարափն ամայի էր:

Հեռուէն, բայց կեցող բազմութիւ նաւերուն մէջէն, գետ հանդիպակաց եզերքին վրայ կը նշմարուէին նաւերուն լուսավառութիւնները, բայց բաղաբին այդ մասին տխուր բնակարաններէն ոչ շուկ ոչ յոյս դուրս կելլէր:

— Ճիշդ հոս է, ըսաւ մեր մարդերէն մէկը, ցուցնելով ողորմելի տունը որուն առջեւ հասած էին: Ժամանակ էր, ա՛լ կարողութիւն չունիմ, ի՞նչ զգուելի թաղ:

— Իրողութիւնը սա է որ ձեր թաղերուն պահպանութեանը հսկող պաշտօնեան կերելայ թէ շատ չի զբաղիր այս թաղով, պատասխանեց ընկերը: Ստոյգ էք որ հոս է:

— Այո՛, կատարելապէս ստոյգ, յարեա՛ գիշերուս յաճներուն առաջինը, որ շատ սրտմտա՛ կերէք:

Այս խօսքերն ըսելով խրճիթին մօտեցաւ, սուրին կոթովը երկու անգամ զարկաւ դրան, և արծաղանգը միայն պատասխանելով իրեն, տխուր շեշտով մը մըրմընաց, նորէն զարնելով:

— Այս աւանակ՝ Ռուսին տունը չէ: Աս էր պակաս, նաւապետ:

— Քիչ մը համբերութիւն, նախագահս, ահա կուգայ գոր:

Արդարեւ դրան անյօդ տախտակամածներուն ձեղքերէն լոյսի տկար ճառագայթ մը կերեւէր:

Գրեթէ անմիջապէս դուռը բացուեցաւ, բայց ըզգուշութեամբ և անանկ մը որ ուժգնութեամբ ներս չը մտնեն այդ ժամուն ներկայացող անձէրը, որոց անշուշտ չէր սպասէր ինք:

— Ո՛վ էք, ի՞նչ կուղէք, հարցուց տանէրը բիրտ՝ ձայնով:

Արժ, ըսաւ այն որ նախագահ կոչուած էր, ահա դժուարութիւն մը զոր չը նախատեսեցինք: Չեմ ուզեր սակայն բարձրաձայն պոռալ իրեն իմ անունս:

— Կարծեմ որ Ռուսի չղիտի ճանշնայ ձեզ, զիտեղ տուաւ խօսակիցը ուսերը թոթուելով, ձեզ որ իր պաշտօնական հայթայթիչն էք:

— Հա՛, իրաւ է, պատասխանեց Մէնկ զոր ընթերցողը արդէն գուշակեց անշուշտ. շիտակը կ'ապուշնամ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻՒԹԻ ԶՈՀԵՐ

(Պատկեր մը տաճկահայաստանի իրական կեանքէն)

Գրեց

Ղազարոս Պ. Նահապետեան

Գին 1 ֆր. 50 սանդիմ

Կը ծախուի «Իրաւունք»-ի խմբագրատունը և Ա. Զարգանէլեան գրատունը:

Печатница „Взаимность“ — Варна.